# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱԵՄՋԻ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Ախտահանիչ նյութ (ջրածնի պերօքսիդ պարունակող) | Չինաստան Հնդկաստան Ռուսաստան Ուկրաինա Բելառուսիա Եվրո պաՉինաստան Հնդկաստան Ռուսաստան Ուկրաինա Բելառուսիա Եվրոպա | Ախտահանիչ միջոցն իրենից ներկայացնում է խտանյութ՝ անգույնից մինչև բաց դեղին գույնի, թափանցիկ, թույլ, յուրահատուկ հոտով հեղուկ: Որպես ազդող նյութեր պետք է պարունակի ջրածնի պերօքսիդ՝ ոչ պակաս 8,7 %, պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ՝ ոչ պակաս 1,7 % (ՊՀՄԳ), ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ ոչ պակաս 3,7 % (ՉԱՄ), ֆունկցիոնալ և հակակոռոզիոն հավելումներ: Միջոցի պիտանելիության ժամկետը՝ պահպանման պայմաններին հետևելով և արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ ոչ պակաս 2 տարի, աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս 25 օր: Միջոցի լուծույթներն պետք է օժտված լինեն մանրէասպան ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչները՝ թեստավորված Mycobacterium terrae շտամի վրա, լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի (սպորասպան ազդեցություն) հարուցիչների), վիրուսասպան հատկություններով (արտաընդերային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հեպատիտների, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի, ադենովիրուսի, էնտերովիրուսի, ռոտավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպի, արտաընդերային և ընդերային հեպատիտի, Կոքսակի, ECHO, Էբոլայի, Զիկայի, Մարբուրգի և այլ հեմոռագիկ տենդերի վիրուսների նկատմամբ և այլն), սնկասպան հատկություններով սպորասպան հատկություններով և մանրէազերծիչ ազդեցությամբ: Կիրառվում է ցանկացած տեսակի մակերեսների, գույքի, սպասքի, սպիտակեղենի, օդի և այլն, ախտահանման և մաքրման համար, միջոցի հատկությունները պետք է թույլ տան համակցել մեկ գործողության մեջ մշակվող մակերեսների և օբյեկտների լվացումը, ախտահանումը և դեզոդորացումը: Միջոցը կիրառվում է նաև բժշկական գործիքների, այդ թվում՝ ջերմաանկայունների լվացման, ախտահանման համար; Էնդոսկոպերի և նրանց հետ օգտագործվող գործիքների լվացման, բարձր մակարդակի ախտահանման և մանրէազերծման համար: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: Մատակարարման պահին ապրանքի պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АЕМДЖИ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | |